9 ապրիլի 2015 թվականի N 363 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 6-ի N 707 որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացում՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2015 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 27-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) որոշման 15-րդ կետում «80000.0» թիվը փոխարինել «88597.0» թվով.

2) որոշման N 1 հավելվածը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին կետով.

«14.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության գործունեության ապահովում՝ միջոցառման շրջանակում կապահովվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 6-ի N 707 որոշմամբ հաստատված տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կանոնադրությամբ ՏՏԶԱԽ-ի քարտուղարությանը վերապահված գործառույթների բնականոն իրականացումը:».

3) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2015 թվականի ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«	3.	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության գործունեության ապահովում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ (համաձայնությամբ)	2015 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության հետագա բնականոն գործունեության ապահովում	» :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. ապրիլի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 9-ի N 363 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		
				առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0.0	0.0	0.0
			այդ թվում՝			
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
			այդ թվում՝			
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
			այդ թվում՝			
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
			06. Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
			ՀՀ կառավարության աշխատակազմ	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
			որից՝			
			Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2,865.7	5,731.4	8,597.0
			այդ թվում՝			
	03		Ընդհանուր բնույթի ծառայություններ	2,865.7	5,731.4	8,597.0
			այդ թվում՝			

		02	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	2,865.7	5,731.4	8,597.0
			այդ թվում՝			
			03. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ	2,865.7	5,731.4	8,597.0
			ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2,865.7	5,731.4	8,597.0
			որից՝			
			Այլ ընթացիկ դրամաշնորհներ	2,865.7	5,731.4	8,597.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 9-ի N 363 - Ն որոշման

«ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 16 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծախսային ծրագրի անվանումը	Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմնի անվանումը	Ցուցանիշների փոփոխությունը (ծախսերի նվազեցումը նշված է փակագծերում, իսկ ավելացումը՝ դրական նշանով)	Դրամաշնորհ ստացող տնտեսվարող սուբյեկտի անվանումը
բաժինը	խումբը	դասը				
				ՀՀ կառավարության աշխատակազմ		
04	01	01	Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ		(8,597.0)	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ
				ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
01	03	02	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ		8,597.0	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 9-ի N 363 - Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Չափորոշիչներ			Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումը նշված է փակագծերում)					
			ոչ ֆինանսական ցուցանիշներ			ֆինանսական ցուցանիշներ		
			առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները **1. Քաղաքականության միջոցառումներ** **1.1. Ծառայություններ**								
Ծրագրային դասիչը		Անվանումը Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ						
1126	ԱԾ 01	Նկարագրությունը Տնտեսական խորհրդատվության և աջակցման տրամադրում, վերլուծությունների պատրաստում						

Մատուցված ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	X	X	X	(2,865.7)	(5,731.4)	(8,597.0)
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1126 Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ						
Վերջնական արդյունքի նկարագրությունը Տնտեսական գործունեության և օտարերկրյա ներդրումների խրախուսում, արդյունավետության բարձրացում						
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ						

Աղյուսակ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.11 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

(հազ. դրամ)

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)					
		ոչ ֆինանսական ցուցանիշներ			ֆինանսական ցուցանիշներ		
		առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները **1. Քաղաքականության միջոցառումներ** **1.1. Ծառայություններ**							
Ծրագրային դասիչը		Անվանումը Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մրցունակության բարձրացում, Հայաստանում վարկանիշի ձևավորում՝ որպես տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն Նկարագրությունը Միջոցառման շրջանակում նախատեսվում են ոլորտն արտերկրում և Հայաստանում ներկայացնելը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանում ու ապահովում, միջազգային տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին անդամակցում, միջազգային ընկերությունների հետ ՀՀ կառավարության և (կամ) մասնավոր հատվածի մակարդակով համատեղ ներդրումային և կրթական ծրագրերի մշակում ու իրականացում:					
1043	ԱԾ 01						

Քանակական	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խնդիրների վերհանման նպատակով ոլորտի կազմակերպությունների հետ հարցումների կազմակերպում և արդյունքների հետազոտություն			1			
Որակական	Մշակված չէ						
Ժամկետայնության	Մշակված չէ						
Քանակական	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների բազայի վարում	60	90	120			
Որակական	Մշակված չէ						
Ժամկետայնության	Մշակված չէ						
Քանակական	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստերի և աշխատանքային խմբերի հանդիպումների կազմակերպում, ցպահանջ ակումբի նիստերի կազմակերպում	11	18	24			
Որակական	Մշակված չէ						
Ժամկետայնության	Մշակված չէ						
Քանակական	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերի քննարկումների արդյունքում ձևավորված խնդիրների վերհանում, առաջարկների և խորհրդատվության տրամադրում, նիստերի օրակարգի ձևավորում	12	18	24			
Որակական	Մշակված չէ						
Ժամկետայնության	Մշակված չէ						
Մատուցված ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		X	X	X	2,865.7	5,731.4	8,597.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1043 Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ							

Վերջնական արդյունքի նկարագրությունը Երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորում
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները) «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 9-ի N 363 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
ծրագիրը	միջոցառումը			ՀՀ 2015 թվականի պետական բյուջե
1126			**Ծրագիրը**	(8,597.0)
			Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ	
			Ծրագրի նկարագրությունը Տնտեսական խորհրդատվության և աջակցման տրամադրում, վերլուծությունների պատրաստում	

			Վերջնական արդյունքի նկարագրությունը Տնտեսական գործունեության և օտարերկրյա ներդրումների խրախուսում, արդյունավետության բարձրացում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ 01		Տնտեսական գործունեությանն աջակցման ծառայություններ	(8,597.0)
			Մատուցվող ծառայության նկարագրությունը Տնտեսական խորհրդատվության և աջակցման տրամադրում, վերլուծությունների պատրաստում	
			Ծառայություն մատուցողի անվանումը «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ	
1043			**Ծրագիրը**	8,597.0
			Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ	
			Ծրագրի նկարագրությունը ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքների ապահովում, համակարգչային գրագիտության բարելավման, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձրացման միջոցառումներ	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը ՏՀՏ ենթակառուցվածքների բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ 01		Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մրցունակության բարձրացում. Հայաստանում վարկանիշի ձևավորում՝ որպես տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն	8,597.0

			<u>Մատուցվող ծառայության նկարագրությունը</u> Միջոցառման շրջանակում նախատեսվում են ոլորտն արտերկրում և Հայաստանում ներկայացնելը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանում ու ապահովում, միջազգային տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին անդամակցում, միջազգային ընկերությունների հետ ՀՀ կառավարության և (կամ) մասնավոր հատվածի մակարդակով համատեղ ներդրումային և կրթական ծրագրերի մշակում ու իրականացում:	
			<u>Ծառայություն մատուցողի անվանումը</u> «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ